



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 24 ՀՈԿՏԵՄԵՐ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԲԱՆ ԽԱ

Ի ԽՈՐՈՑ ԱՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Կենդանի Աստուծոյ ամենօրհնեալ Որդի,
ահաւոր Հօրդ անհնիւն ծնունդն ես Դուն,
Քեզի համար չկայ բնաւ անկարելի բան.
Քու ողորմութեանդ փառքին անստուեր նշոյլները երբ կը ծագին,
մեղքերը կը հալին, դեւերը կը հալածուին,
յանցանքները կը ջնջուին, կապանքները կը խզուին,
շղթաները կը խորտակուին, մահացածները կը կենդանաձնին,
հարուածները կը բժշկուին, վերքերը կ'առողջանան,
սպականութիւնները կը վերցուին, տխրութիւնները տեղի կու տան,
հեծութիւնները կը նահանջեն, խաւարը կը փախչի,
մէգը կը մեկնի, մառախուղը կը հեռանայ,
մոայլը կը փարատի, աղջամուղջը կը սպառի,
մութը կը վերնայ, գիշերը կ'անցնի,
տագնապը կը տարագրուի, չարիքները կը չֆանան,
յուսահատութիւնները կը հալածուին,
ու Քու ամենակարող ձեռքդ կը թագաւորէ, ո՛վ ֆաւիչդ ամենայնի: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ԵՐԳ ԵՐԳՈՅ 5:1-9



Սիրոյ երգը կը շարունակուի:

«Իմ պարտէզս եկայ, ով հարս քոյրս»: Ահա Փեսան լսելով Հարսին աղօթքը կու գայ մտնելու անոր պարտէզը: Ընդհանրապէս այդ պարտէզը ուրիշ բան չէ եթէ ոչ այն հանդիպման վայրը Քրիստոսի եւ Հարսին: Այն երանական տեղը, հոն ուր առաջին մարդը կը վայելէր նախքան իր մեղանշումը: Ահա կու գայ պարտէզ հաւաքելու զմուշը խունկերուն հետ միասին: Ճաշակելու խորհիսը մեղրին հետ, ու խմելու գինին կաթով:

Ամփոջապէս կը յաջորդէ մէկ այլ ուրիշ արտայայտութիւն մը, **«Իմ զմուշս խունկերուս հետ հաւաքեցի»:** Արդեօք Փեսան կարիքը ունի՞ ուրելու: Աստուած արդեօք կարօք է՞ ուրելիքի: Խորքին մէջ ոչ: Սակայն, Աստուծոյ, Քրիստոսի քաղցն ու ծարաւը մեր իսկ փրկութիւնն է: Առիթով մը երբ աշակերտները կը ստիպէին որ Քրիստոս հաց ուրել, Ան կը պարասխանէր ըսելով. **«Իմ կերակուրս այն է, որ կատարեմ գիս դրկողին կամքը»:** Տակաւին պիտի աւելցնէ ըսելով. **«Անօթի էի, հաց փոխիք, ծարաւ էի՝ ջուր փոխիք ինձի»:**

Ահա այս փողերը կու գան մեզի փոխանցելու հոգեւոր ճշմարտութիւն մը, որ հետեւեալն է. զմուշը հաւաքելու խունկերուն հետ միասին: Զմուշը խորհրդանիշ է մեռելութեան, իսկ խունկը՝ աստուածային բնութեան: Սա կը նշանակէ, թէ Փեսան ինք յանձն առաւ մահը, մեռելութեան պտուղը, մեզի համար, մեր փոխարէն, սակայն անոր հետ միախառնուած աստուածային սէր:

«Իմ գինիս կաթովս խմեցի»: Այս փողերը եւս կու գան մէկ այլ ուրիշ ճշմարտութիւն մը փոխանցելու Քրիստոսի կատարած փրկագործութեան: Երբ առիթով մը Յակոբոսն ու Յովհաննէս խնդրանք մը կը ներկայացնէին Քրիստոս պիտի հարցնէր ըսելով. **«Կրնա՞ք խմել այն բաժակը որ ես պիտի խմեմ»:** Այդ բաժակը մահուան բաժակն էր, որ նաեւ իր արհունովը պիտի խորհրդանշուէր: Բայց այս բաժակին ըմպումով նաեւ տեղի պիտի ունենար մեղքերու քաւութիւնն եւ թողութիւնն, ուր այս անգամ մեղաւոր մարդը պիտի մաքրուէր եւ պիտի դառնար կաթնակեր: Ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. **«Տակաւին մանուկներ էք, որոնք կաթով կը սնանին»:** Ուստի գինիին հետ նաեւ կաթը, որ անմեղութեան ու մաքրութեան խորհրդանիշ է:

Շարունակուելով հետեւեալ պատուէրը կը փրուի. **«Կերէք, ով բարեկամներ, խմեցէք, ու գինովցէք, ով սիրելիներ»:** Քրիստոս նոյնը պիտի պատուիրէ իր աշակերտներուն վերնաբան մէջ վերջին ընթրիքին. **«Առէք, կերէք, այս է իմ մարմինս: Առէք, խմեցէք, այս է իմ արիւնս»:** Եւ ահա նախ ինք խմեց, ապա խմել փուս իր աշակերտներուն: Կը նշանակէ նախ ինք ճաշակեց մահը, ապա աշակերտները նաեւ բաժնեկից դարձան այդ մահուան, որպէսզի նաեւ Անոր հետ միասին բաժնեկից դառնային յարութեան: Ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. **«Քրիստոսի հետ խաչուեցաք, որպէսզի Քրիստոսի հետ յարութիւն առնէք»:**

«Ես կը քնանամ, բայց իմ սիրտս արթուն է»: Այո, Քրիստոսի պարգեւած գինին խմելէ յետոյ, անպայմանօրէն կրնանք քնանալ, բայց ոչ այն քունով, որ սովորական գինին կը պարճառէ, երբ արբենանք: Ընդհակառակը, սովորական գինիին արբեցութիւնը ոչ միայն մեզ կը քնացնէ, այլ նաեւ մեր միտքը կը թմրեցնէ, իսկ այս պարագային մարմնով քնացած, բայց սրտով արթուն: Այս գեղեցիկ բացատրութիւնը կը խորհրդանշէ Քրիստոսի գերեզման դրուիլը, որ մարմնով քնացած, բայց իր աստուածութեամբը արթուն մնաց: Նոյնպէս ալ բոլոր անոնք, որոնք Քրիստոսի հետ միասին կ'ըմպեն այդ բաժակէն, թէւ մարմնով քնանան, բայց սրտով արթուն պիտի մնան:

«Ահա իմ սիրականիս ձայնն է»: Երբ այդ բաժակը կ'ըմպենք, մեր միտքերը արթուն են, մեր ականջները բաց են լսելու Քրիստոսի ձայնը: Նման այն ծառաներուն, որոնք արթուն կը սպասեն իրենց Տիրոջ վերադարձին:

Այս բոլոր բացատրութեան հետ մէկտեղ, նաեւ զգուշաւորում մը կայ, որ մեզի փրուած այդ մաքրութիւնն ու անմեղութիւնը այնպէս մը պահենք, որ չկորսցնենք: Որովհետեւ շարունակելով հարսը կ'ըսէ. **«Իմ պարմուճանս հաներ եմ, զանիկա ինչպէ՛ս հագնիմ: Ոտքերս լուացեր եմ, զանոնք ինչպէ՛ս աղպտեմ»:** Պարմուճանը մեղքի պարմուճանն էր, որ Քրիստոսի խաչելութեամբ մեր վրայէն հանեցինք: Իսկ ոտքերու մաքրութիւնը ոտնալուայի գիշերը Քրիստոս մաքրեց եւ օծեց, եւ մենք մկրտութեան ջուրով լուացուեցանք: Ինչպէս կարելի է երբ վերադառնալ անցեալի վիճակին անգամ մը որ նորոգուեցանք:

«Իմ սիրականս իր ձեռքը ծակէն երկնցուց, ու անոր համար իմ աղիքներս գալարուեցաւ»: Հեղափոխական, եւ քիչ մըն ալ փարօրինակ արտայայտութիւն մըն է, որ մեզի կը ներկայացնէ այս նախադասութիւնը: Ըսելու եղանակ մըն է, որ կը նշանակէ հարսը կ'ուզէ տեսնել ու ճանչնալ Փեսային խորհուրդը, անոր ինքնութիւնը, Անոր փուած շնորհները, որ սակայն, այդ ճանաչումը հագիւ շարէն միայն քիչն է, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. **«Մենք հիմա շարէն միայն քիչը գիտենք»:** Այսքանով հանդերձ, փակաւին ի վիճակի չէ նոյնիսկ այսքանը տեսնելու, որովհետեւ այնպէս ինչպէս փկար աչքը չի կրնար տեսնել արեգակը, այնպէս ալ մարդկային բնութիւնը չի կրնար տեսնել եւ հասկնալ Աստուծոյ խորհուրդները, եւ կարենայ բացատրել զանոնք:

Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Մինչեւ երրորդ երկինք յափշտակուեցայ եւ րեւսայ այնպիսի բաներ ու լսեցի այնպիսի բաներ, որ կարելի չէ բացատրել», այսինքն մարմնեղէն լեզուն չի կրնար բացատրել հոգեւոր խորհուրդը: Հակառակ, այս ճշմարտութեան, սակայն, նախաճաշակ մը փրուած է եւ ապով է որ կը պատրաստուինք դիմաւորելու մեր Տէրը եւ Փրկիչը՝ Յիսուս Քրիստոսը:

«Ես ելայ, որ իմ սիրականիս բանամ դուռը, ու ձեռքերէս զմուռս ու իմ մատներէս ընտիր զմուռս կաթեցին՝ փականքը բռնելու րեղին վրայ»: Ինչպէս նախապէս ալ ըսուեցաւ զմուռը խորհրդանիշ է մահուան, մեռելութիւն: Հազիւ րեւանելէ յետոյ շապեն քիչը, հոգու աչքերն են որ կը բացուին արթնալու մեղքի թմրութենէն ու մէկդի ձգելու մեռելային գործերը, եւ ինքզինքը կամաւորաբար այդ վիճակին մէջ դնելու, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. «Ես այս աշխարհին համար խաչ ելած եմ, այս աշխարհն ալ ինձի համար»: Ահա այս է այն վիճակը, որ կամաւորաբար հրաժարելու աշխարհէն ու աշխարհիկէն կարենալ ձեռք ձգելու համար երկնայինը, յաւիտենական կեանքը:

«Ես իմ սիրականիս բացի, բայց իմ սիրականս քաշուեր գացեր էր: Զանկա փնտրեցի, բայց չգտայ: Զանկա կանչեցի, բայց ինձի պատասխան չտուաւ»: Հետաքրքրական մէկ այլ ուրիշ արտայայտութիւն: Այնքան որքան հարսը կը ճանչնայ Փեսային շապեն քիչը, այսքանը նոյնիսկ այնպէս մը կը թուի թէ կարծէք երբեք ալ րեւսած չըլլար, փնտրած չըլլար: Հակառակ այս ճշմարտութեան, սակայն, հարսը հետամուտ է փնտրելու Փեսային, որովհետեւ Անոր սիրովը բռնուած է: Այնպիսի սէր մը, որուն համար Հարսը՝ Եկեղեցին՝ հաւաքացեալները յանձն առին նահապակութիւնը:

Եւ հիմա պահը կը հասնի եւ Հարսը կը սկսի փնտրելու Փեսան: Անոր կը պատասխանեն ըսելով. **«Քու Փեսադ ինչով փարբեր է միսներէն»:** Ահա Հարսը մէկ առ մէկ կը սկսի բացատրել եւ ներկայացնել Փեսան ու Անոր իւրայայտութիւնն ու գեղեկցութիւնը:

Անկա «սպիտակ ու կարմիր է»: Կը խորհրդանշէ Քրիստոսի մարդեղութիւնը՝ մարմին եւ կարմիրը՝ արիւն: Սպիտակը՝ մաքրութիւնը, որ մարմինը մեղք չէ ճանչցած, իսկ կարմիրը՝ արիւնը: Ուստի Անոր ծնունդը կը ներկայացնէ, որ թէպէտ մարմին սրացաւ կոյս Մարիամէն, բայց Անոր ծնունդը միսներուն ծնունդին չի նմանիր, որովհետեւ Անոր ծնունդը րեղի ունեցաւ Սուրբ Հոգիին միջոցաւ:

Անոր **«աչքերը վազող ջուրերու քով կաթով լուացուած աղանիներու աչքերուն կը նմանին»:** Այսինքն՝ միամիտ է, որ կը նշանակէ ջուրի այլեւայլ խարդախ եւ թիր նայուածք մարդոց նկատմամբ, այլ՝ ուղիղ, ճշմարիտ եւ սրահայեաց: Որ կը րեւանէ ամէն ինչ որ կայ մարդու մէջ, ու կը քննէ անոնց խորհուրդները:

Տակաւին, **«անոր քիմքը՝ քաղցր ու ինք ամբողջ ցանկալի է»:** Քիմքի քաղցրութիւնը, որ կը նշանակէ Անոր բերնէն ելած ամէն մէկ խօսք քաղցր է մեղրէն աւելի: Ամէն անգամ երբ հրաւէ եւ կոչ ուղղէ մարդկութեան. «Ինձի եկէք դուք բոլորդ հոգնած ու բեռնաւորուած եւ ես ձեզի հանգիստ պիտի փամ», քաղցր կը հնչեն այդ կոչերը: Եւ իբրեւ այդպիսին ցանկալի է ունենալ, այնպէս ինչպէս պիտի ըսէ Քրիստոս. «Անցեալի մարգարէները ցանկացին րեւանել, բայց չրեւան, լսել, բայց չլսեցին, ինչ որ դուք կը րեւանէք ու կը լսէք» (Ղուկ 10.24): Մէկ այլ ուրիշ րեղ աշակերտներուն պիտի ըսէ. «Պիտի գան ժամանակներ երբ պիտի ցանկաք րեւանել Մարդու Որդին, բայց պիտի չկարողանաք» (Ղուկ 17.22): Ուստի, այսօր մենք, որքանով կը ցանկանք ունենալ Քրիստոսը, ըլլալ Քրիստոսի հետ: